

Հաստատված է՝

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտխորհրդի՝ 2021թ. հունիսի 29-ի որոշմամբ

Արձանագրություն № Na 01-06/21

Գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

Ե. Վ. Վարդանյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային
համալսարանում աշխատանքի վրա հիմնված (WBL) ուսումնառության
գործընթացի կազմակերպման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տերմիններ և հապավումներ..... 3

Հղումներ..... 3

1. Ընդհանուր դրույթներ..... 4

2. WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ ՄԿԾ-ների իրականացման կազմակերպա-իրավական ձևերը..... 5

3. WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ կրթական գործընթացի կազմակերպման կարգը..... 5

Տերմիններ և հասկացումներ

ՃՇՀԱՀ	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
WBL-տեխնոլոգիաներ	«Work Based Learning» (WBL) տեխնոլոգիաներ, «Work Based Learning» - աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն
ՄԿԾ	Մասնագիտական Կրթական Ծրագիր
ԱԿԾ	Անհատական Կրթական Ծրագիր
ԷԿ	<p>Էլեկտրոնային Կրթություն: Այն նախատեսում է կրթական գործընթացի կազմակերպում՝ տարբեր կրթական ծրագրերի համար տեղեկատվական բազաների, տվյալների, տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական միջոցների, հաղորդակցման ցանցերի կիրառմամբ:</p> <p>Էլեկտրոնային Կրթության տարատեսակներից են.</p> <ul style="list-style-type: none">- էլեկտրոնային կրթական ռեսուրսների, այդ թվում էլեկտրոնային կրթական դասընթացների, բաց առցանց դասընթացների կիրառմամբ ինքնուրույն աշխատանքը,- հեռավար փոխգործակցության հնարավորությունը դասախոսի հետ (խորհրդատվություն, կոնսուլտացիաներ, գնահատումներ),- ընդհանուր վիրտուալ գործունեություն իրականացնող օգտատերերի համայնքի ստեղծումը:
ՏՀՏ	Տեղեկատվական և Հաղորդակցական Տեխնոլոգիաներ՝ Տեղեկատվության հետ աշխատանքի գործընթացներն ու մեթոդներն են, որոնք իրականացվում են հաշվողական տեխնիկայի և հեռահաղորդակցման միջոցների կիրառմամբ:
ՀՈՒՏ	Հեռահար Ուսումնառության Տեխնոլոգիաներ՝ կրթական տեխնոլոգիաներն են, որոնք իրացվում են հիմնականում տեղեկատվական-հեռահաղորդակցման ցանցերի կիրառմամբ և դասավանդող կազմի և ուսանողների հեռավար փոխգործակցությամբ:

Հղումներ

1. ՀՀ Օրենքը «Բարձրագույն կրթության և գիտության մասին», 14 դեկտեմբերի 2014թ.
2. ՀՀ Օրենքը «Կրթության մասին», 14 ապրիլի 1999թ., ՀՕ-297
3. «Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը», ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշում
4. ՃՇՀԱՀ-ի Կանոնադրություն
5. ՃՇՀԱՀ-ի նորմատիվային ակտեր

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Ընթացակարգը սահմանում է ՃՇՀԱՀ-ում ուսումնառության նորարարական ճկուն տեխնոլոգիաների ներդրման կարգը և առանձնահատկությունները:
- 1.2 Համալսարանն իրավասու է Աշխատանքի վրա հիմնված ուսուցման տեխնոլոգիաներ կիրառել, որոնք հիմնված են WBL (work based learning) սկզբունքների վրա:
- 1.3 WBL-ի սկզբունքների կիրառումը բուհում ենթադրում է աշխատանքի հետ համատեղված ուսուցման կազմակերպում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի իրականացման ընթացքում՝ անկախ կրթության կազմակերպման ձևից (առկա, հեռակա):
- 1.4 Մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ) կարող են ճանաչվել որպես WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող կրթական ծրագրեր այն դեպքում, եթե ուսումնական պլանով նախատեսված լսարանային պայմաններում անցկացվող դասախոսությունների ընդհանուր թվի նկատմամբ համալսարանից դուրս իրականացվող գործնական դասընթացների (ընկերության/ կազմակերպության/ ձեռնարկության տարածքում՝ համապատասխան մասնագետի ղեկավարմամբ) դասաժամերի քանակը կազմում է ոչ պակաս քան 40%:
- 1.5 WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող կրթական գործընթացը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող բոլոր նորմատիվային և օրենսդրական փաստաթղթերին համապատասխան:
- 1.6 WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ՄԿԾ-ների շրջանակում ուսանողներին հնարավորություն է տրվում իրացնել կրթական ծրագիրը ամբողջ ծավալով՝ անկախ ուսանողի գտնվելու վայրից: Ընթացիկ և ամփոփոփիչ ատեստավորումները կարող են իրականացվել ինչպես ավանդական մեթոդներով, այնպես էլ հեռավար՝ համապատասխան կրթական տեխնոլոգիաների կիրառմամբ:
- 1.7 Դիմորդները պետք է նախապես իրազեկվեն WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ՄԿԾ-ների պայմաններին, որից հետո ստորագրեն պայմանագիրը:
- 1.8 WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ՄԿԾ-ներում ներառված ուսանողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ՝ համաձայն ուսումնառության այն ձևին, որում ընդգրկվել են:

**2. WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ ՄԿԾ-ների իրականացման կազմակերպա-
իրավական ձևերը**

2.1 ՃՇՀԱՀ-ում WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ՄԿԾ-ներում ուսուցումը կարող է իրականացվել ուսանողի բնակվելու վայրում: Բացառություն են կազմում այն պարապմունքները և/կամ ընթացիկ, միջանկյալ և եզրափակիչ ատեստավորումները, որոնք պահանջում են ուսանողի ֆիզիկական ներկայություն:

2.2 ՃՇՀԱՀ-ում WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ՄԿԾ-ների տևողության ժամկետները պետք է համընկնեն ավանդական ՄԿԾ-ի ժամկետների հետ:

**3. WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ կրթական գործընթացի կազմակերպման
կարգը**

3.1 ՃՇՀԱՀ-ում WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ՄԿԾ-ների շրջանակներում կրթական գործընթացի կազմակերպումը կարգավորվում է.

- Սույն Ընթացակարգով,
- ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի (եթե առկա է) պահանջներով,
- Բակալավրի և մագիստրոսի որակավորումներ շնորհող ՄԿԾ-ներով,
- Ուսումնական պլանով և օրացուցային գրաֆիկով,
- Ուսանողի անհատական ուսումնական պլանով (եթե այդպիսին կա),
- Կազմակերպությունների/ընկերությունների/ձեռնարկությունների հետ ՃՇՀԱՀ-ի պայմանագրերով (համաձայնագրերով, փոխըմբռնման հուշագրերով կամ համաձայնագրային այլ փաստաթղթերով), որտեղ սահմանված են յուրաքանչյուր կողմի պարտականություններն ու լիազորությունները,
- Համալսարանի ռեկտորի և կազմակերպությունների/ ընկերությունների/ ձեռնարկությունների ղեկավարության WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման մասին հրամաններով, ինչպես նաև կազմակերպչական և վարչական աշխատանքները կատարողների նշանակմամբ:

3.2 WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնական գործունեությունն իրականացվում է հետևյալ ձևերով.

- կոնտակտային աշխատանք,
- ուսանողների ինքնուրույն աշխատանք,
- ուսանողների կողմից անմիջապես աշխատանքային տեղում իրականացվող կրթական նախագծեր,
- ցանցային ուսումնառություն՝ այլ բուհերի, ձեռնարկությունների/ ընկերությունների/ կազմակերպությունների ռեսուրսների, ինչպես նաև արտաքին կրթական հարթակների ներգրավմամբ:

- 3.3 Կրթական գործընթացի բոլոր մասնակիցների փոխհամագործակցությունը պարտադիր պայման է: Այն իրականացվում է էլեկտրոնային, հեռավար, տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ:
- 3.4 ՃՇՀԱՀ-ում ուսումնական գործընթացի WBL-տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպումը թույլատրվում է այն դեպքում, երբ ուսումնական պլանը ներկայացված է առանձին մոդուլներով (ցիկլերով): Յուրաքանչյուր մոդուլը (ցիկլը) ներառում է մեկ ծավալուն առարկա կամ մի քանի առարկաների ամբողջություն, որն ապահովված է համապատասխան ուսումնա-մեթոդական նյութերով:

Գիտական քարտուղար՝

Լ.Հ. Լևոնյան

29 հունիսի 2021թ.

Գիտխորհրդի որոշում՝ 01-06/21